ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՑ

«Մուրճ»-ի շապկի վրայ տպուած ալլեգորիան (այլաբանութիւնը) աւելորդ չենք հասարում մի քանի խօսքով բացատրել։ Գիտական ոգին իր ջահով լուսաւորում է այն նոր ճանապարհը, որ ցոյց տուին Դարվինի և Մարքսի վարդապետութիւնները։ Նա է տանում դէպի լուսաւոր ապագան, կապիտալիստական ֆազիսի միջից անցնելով։ Խաղաղութեան ձիթենին կաճի միայն այն ժամանակ, երբ մարդկութիւնը կընթանայ այդ նոր ճանապարհով։ Հին կեանքի ստեղծած նախապաշարմունքների ժայռանման պատը խորտակելով իր մուրճով մարդկութեան աշխատաւոր մասը, նոր սերնդին եւ կանանց սեռին, ինչպէս և քնից զարթած և շղթաները փշրած առիւծանման ժողովրդին, ցոյց է տալիս այդ նոր կեանքի ուղին։ Այդ է մեր ալլեգորիայի իմաստը։

Մեր այդ իդէան նախ պատկերացրեց իբրև բարելիէֆ քանդակագործ Մ. Միքայէլեանը. սակայն թիֆլիսում դժուար եղաւ մաքուր կլիշէ շինել այդ բարելիէֆից և մենք մի քիչ փոփոխած նկարել տուինք այդ, տեխնիկօրէն աւելի դիւրին ձև տալով նրան։

1907 թուի բաժանորդագրութիւնը բանալով «Մուրճում յայտնել էինք մեր մտադրութիւնը, ամսագիրս պատկերազարդ դարձնել, եթէ բաժանորդագրութիւնը սկզբում աջող գնայ։ Բայց մեր հրապարակախօսական սեպուհ պարտքը և կոչումը կատարելով, կռիւ. յայտարարեցինք Դաշնակցութեան նման մի ահեղ կազմակերպութեան ոճրախնամ արարքների, նրա այլասերող և անբարոյականացնող ռեժիմի դէմ և դրանով յարուցինք այդ ընկերակցութեան խուլիգանացած շատ գործակալների կատաղի հալածանքը... Դաշնակցական травля-ն, որսորդական հալածանքը ամենուրեք, ուր տարածուած

է անգլիտակից հայ ժողովրդի վրայ դրա ճիզուիթական ցանցը անհետևանք չմնաց... Մենք այդ գիտէինք, բայց մեր դեվիզն է եղել՝ գերադասել վտանգալից ազատութիւնը զանազան համակերպութիւններից։

Malo periculosam libertatem!

Շատ գրադարան-ընթերցարաններից մեզ դիմում են, խնդրելով ձրիաբար «Մուրճ» ուղարկել։ Այդպիսի խնդիրքներ մենք կը կատարենք միայն այն դէպքերում, երբ կը գտնուեն աւելորդ բաժանորդագներ ուղարկողներ։ Ուլիա-Նորաշէնի համար ուղարկում ենք 1907 թ. «Մուրճ», Բագուից բժ. Գար. Սարգսեանից ստացած բաժանորդագնով։

Խմբագիր—Հրատարակիչ՝ **Լ. Սարգսեան**
Իրաւատէր՝ **Վ. Քանանեան**

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 *թուի*

Ձ Ա Յ Ն

Քաղաքական, տնտեսական, հասարակական շաբաթաթերթի

Բաժանորդագինը՝ Թիֆլիզ տարեկան 3 ր. կէս տարին 1 ր. 60 կ., ամսական 30 կ., հատով 7 կ. Թիֆլիզից դուրս տարեկան 3 ր. 50 կ. կէս տարին 2 ր. ամսական 35 կ. հատով 8 կ.։ Արտասահման տարեկան 4 ր. 50 կ. կէս տարին 2 ր. 50 կ. ամսական 45 կոպ.

ԲԱՆՒՈՐՆԵՐ, ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՒԵՑԷՔ ՁԵՐ ԹԵՐԹԻՆ

Հասցէն՝ Тифлисъ, редакція «Дзайнъ», Малая-Ванкская, № 4. *Արտասահմանից՝* Tiflis, rédaction du «Dzaïn», Malaja-Vankskaja, 4.